№ 47 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 2 — 1901 — ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 2 № 47

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասի պատմութեան վերաբերութեամբ. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եփրեմ Տէր-Ցակոբեան. Բազուի հայոց Մարգասիրական ընկերութիւնը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆանսիայից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բժշկի զրոյցներ. Ագուլեցին Ագուլիսում։

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

—

Կովկասի պատմութիւնը մինչև այժմ շատ թերի է ուսումնասիրված։ Չը կան տեղեկութիւններ նոյն իսկ ամբողջ ազգութիւնների անցեալ կեանքի մասին, որոնց թւին պատկանում են Դաղստանի լեռներում պատսպարված շատ մանր ազգութիւններ, իսկ այն ազգութիւնները, որոնք թողել են գրաւոր յիշատակարաններ, տեղեկութիւն ունեն միայն արտաքին դէպքերի և խոշոր եղելութիւնների մասին և բոլորովին անգիտակ են ժողովուրդների ներքին կեանքին ու առօրեայ յարաբերութիւններին։

Ժողովրդական մասսաների պատմութիւնը, պետական և հասարակական կազմակերպութեան պատմութիւնը դեռ պէտք է մշակվեն այսուհետև այն նիւթերից, որոնք գտնվում են եւրոպացի ճանապարհորդների և քաղաքական ու կրօնական պատուիրակների զեկուցումների մէջ, այլ և այն նոր ձեռագիրների մէջ, որոնք կարող են երևան գալ թէ մեր երկրում և թէ մեր երկրից դուրս։ Անկասկած՝ այն հին աշխարհակալների արքունիքներում, որոնք տիրել էին մեր երկրին, գտնվում են եղել աշխատութիւններ և Կովկասի մասին։ Արաբիայի, Պարսկաստանի, Թուրքեստանի որոշ տեղերում պահպանված պէտք է լինեն յիշատակարաններ մեր երկրի և նրա ժողովրդի մասին։

Մի քանի տարի սրանից առաջ, երբ ապստամբութիւն ծագեց Թուրքեստանում և կալանաւորվեց Մինտուբինի Իշանը, խուզարկութեան ենթարկվեցին նրա միտեղած ձեռագիրները։ Հանդէս եկաւ մի հետաքրքրական գրագրան, որտեղ պահվում էին բազմատեսակ բովանդակութեան աշխատութիւններ։ Կամն արդեօք այդ ձեռագիրների մէջ որ և է նիւթեր մեր երկրի մասին թէ ոչ—այդ մենք չը գիտենք, բայց որ մեր երկրում և մեր սահմանակից երկիրներում դեռ շատ տեղերում կան ամբողջ գրագրաններ, կազմված հին ձեռագիրներից, այդ անկասկած է։

Պետերբուրգի հնագիտական ընկերութեան փետրվարի 22-ի նիստում Ի. Զավախով, օգտվելով հին աշխատութիւններից, կարդաց մի զեկուցում այն վիճակագրութիւնների մասին, որոնք կատարվել են Վրաստանում սկսած տասներեքերորդ դարից։ Վրաց առաջին վիճակագրութիւնը տեղի է ունեցել 1254 թւականին և այնուհետև կրկնվել է զանազան ժամանակներում։ Այդ վիճակագրական աշխատութիւններից կարելի է հանել հետաքրքրական տեղեկութիւններ հարկերի մեծութեան, գինուոր հաւաքելու, ճորտերի քանակութեան, կալուածատէրերի գոյքի, դասակարգերի վիճակի ու նրանց պարապմունքների մասին։ Այդ և ուրիշ տեղեկութիւնները, որոնք վերաբերում են երկրի կարգերին և արհեստներին, թանգագին նիւթեր են՝ պարզելու կովկասցիների անցեալ պատմական կեանքը և հասկանալու երկրի մէջ տեղի ունեցած շատ պատմական անցքեր և փոփոխութիւններ։

Կովկասի պատմութեան այդ մասը դեռ կարօտ է հարուստ նիւթերի և բարեխիղճ ուսումնասիրողների։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՑԱԿՈԲԵԱՆ

—

«Մշակի» երէկվայ համարում Շուշուց հաղորդված էր, որ փետրվարի 22-ին մեռաւ ինժեներ-տեխնոլոգ Եփրեմ Տէր-Ցակոբեան։

Այդ վաղաժամանակ, ցաւալի զոհի մասին եմ ես այսօր ուզում մի քանի խօսք ասել, կատարելով հանգուցեալի ամենամօտիկ ընկերներից մէկի տխուր պարտականութիւնը։

Չեզ, ընթերցող, այդ անունը անծանօթ է։ Եւ գուցէ դուք կը զարմանաք, որ ես ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում մի մահացած մարդու վրա, որ նշանաւորների թւին չէ պատկանում։ Իր հայրենի Խալափչա գիւղում, համարեա Արաքսի հովտում, Թոքախտից մեռնում է մի ինժեներ-տեխնոլոգ։ Սա չէ կարող յուզել ձեզ, սա մի սովորական լուր է, որ հաղորդում է, թէ պակասեց մի մարդ էլ։ Ինչով էր նա նշանաւոր, ինչ է արել՝ հասարակական ուշադրութիւնը գրաւելու համար։

Այո, այդպէս է։ Բայց թոյլ տուէք, ընթերցող, հարցնել ձեզ. ինչ է առհասարակ նշանաւոր մարդը։ Ես նշանաւոր, շատ նշանաւոր եմ համարում կեանքի մէջ գործող իւրաքանչիւր անանուն հերոսին, որ լցված է սուրբ եռանդով եւ մաքուր, բիւրեղի պէս մաքուր սիրտ ու հոգի ունի։ Ահա այդպիսի մի մարդ էր հանգուցեալը, եւ ես իմ պարտքս եմ համարում ծանօթացնել ձեզ նրա հետ, հաւատացած լինելով, որ նա իր ամբիծ, իդէալական կեանքով եթէ չէ կարողացել մի նշանաւոր դեր կատարել մեր մէջ, գոնէ անպայման իրաւունք է ձեռք բերել օրինակ հանդիսանալու շատերի եւ շատ շատերի համար...

Եփրեմ Տէր-Ցակոբեանը գիտութեան զոհ է։ Մի առողջ, պնդակազմ երիտասարդ, նա Թիֆլիսի բէալական դպրոցը վերջացնելուց յետոյ գնում է Պետերբուրգ, բարձր ուսում ստանալու։ Բայց միջոցներ չունի, աղքատ ծնողների զաւակ է. եւ մատնվում է աղքատ ուսանողի դառն ճակատագրին, որ իսկոյն Թոքախտի թոյնն է պատուաստում նրա օրգանիզմի մէջ։ Հիւանդութիւնը իր գործն է տեսնում, իսկ երիտասարդը չէ ուզում ընկճվել, գործ է դնում իր երկաթի կամքը՝ նրան մի կերպ յաղթահարելու եւ ուսումը վերջացնելու համար։ Մաքառումը երկար է տեւում, ամբողջ ինն տարի։ Քանի քանի անգամ նա կիսամեռ դրութեան մէջ վերադարձել է Շուշի, այդտեղ փոքր ինչ կազդուրվել եւ էլի գնացել Պետերբուրգ։ Մահվան անկողնում էլ նա պատրաստվում էր իր վերջնական քննութիւնները տալու։ Բայց Թոքախտը չէր թոյլ տալիս նրան հանգիստ վերջացնել գոնէ այդ քննութիւնները։ 1892 թւականին նա ստիպված է լինում վերջնական քննութիւնների մի մասը Պետերբուրգից փոխադրել Խարկով. այդտեղ էլ նա վերջացնում է իր ուսումը։

Մի կատարեալ հերոսութիւն էր այդ բանը։ Տէր-Ցակոբեանը, սոսկալի հիւանդութիւնը կրծքում, մտնում է կեանքի մէջ։ Նա մի նեղ, կարիերիստ մասնագէտ չէր, այլ լաւ կրթված, զարգացած մի ինտելիգենտ։ Դեռ ուսանող ժամանակ նա իր հայրենի քաղաքում մասնակցում էր հասարակական գործերին, ոգեւորված առաջադէմ գաղափարներով, իր ազգին ծառայելու տենչանքով։ Նրա համար խորթ չէր հայոց գրականութիւնը. «Մշակը», Րաֆֆիի գրքերը կարդալով նա այնքան կարողացել էր սովորել մայրենի լեզուն, որ դեռ ուսանող ժամանակ սկսել էր թարգմանութիւններ անել։ Ութսունական թւականների երկրորդ կէսից Շուշում կազմվել էր երիտասարդ կուսակցութիւն, որ կենդանութիւն տուեց այնտեղի Բարեգործական ընկերութեան, բաց արեց գրագրան, սկսեց ազդել դպրոցական գործերի վրա։ Ցիշում եմ այդ անմոռանալի ժամանակները։ Կռիւը հին եւ նոր սերունդի մէջ տաք էր, երկարատեւ։ Եւ չեմ յիշում մի դէպք, երբ Եփրեմ Տէր-Ցակոբեանը եղած լինի Շուշում եւ ամեն մի հարցի, ամեն մի ընդհարման մէջ առաջաւոր դիրքը չը լինի գրաւած։ Ժողովրդական գաղափարներով տոգորված մի մարդ, նա անհաշտ, համարձակախօս թշնամի էր աղայական դասակարգի դիմաց։ Վարակիչ էր նրա ոգեւորութիւնը. նա իր եռեւից տանում էր իր ընկերներին, իսկ նրա ընկերները ոչ հարուստներն էին, ոչ փառքի տիրացած ինժեներ ու կարիերիստ համալսարանականները։ Անկախ եւ ինքնուրոյն մտքի տէր էր նա եւ իր շրջանը ընտրում էր այնպիսի անհատներից, որոնք սրբտակից եւ գաղափարակից էին նրան։

Ինչքիր կարող էր անել մի այսպիսի մարդ, եթէ չը կրէր իր մէջ անողոք հիւանդութիւնը։ Կեանքի մէջ նա կը լինէր մի ազնիւ, իդէալիստ գործիչ. այդպէս էր ցոյց տալիս նրա զարմանալի հաստատութիւնը, նրա պարզ ու հասարակ կենցաղավարութիւնը։ Բայց Թոքախտը չէ թոյլ տալիս նրան հանգիստ վերջացնել գոնէ այդ քննութիւնները։ 1892 թւականին նա ստիպված է լինում վերջնական քննութիւնների մի մասը Պետերբուրգից փոխադրել Խարկով. այդտեղ էլ նա վերջացնում է իր ուսումը։

Մի կատարեալ հերոսութիւն էր այդ բանը։ Տէր-Ցակոբեանը, սոսկալի հիւանդութիւնը կրծքում, մտնում է կեանքի մէջ։ Նա մի նեղ, կարիերիստ մասնագէտ չէր, այլ լաւ կրթված, զարգացած մի ինտելիգենտ։ Դեռ ուսանող ժամանակ նա իր հայրենի քաղաքում մասնակցում էր հասարակական գործերին, ոգեւորված առաջադէմ գաղափարներով, իր ազգին ծառայելու տենչանքով։ Նրա համար խորթ չէր հայոց գրականութիւնը. «Մշակը», Րաֆֆիի գրքերը կարդալով նա այնքան կարողացել էր սովորել մայրենի լեզուն, որ դեռ ուսանող ժամանակ սկսել էր թարգմանութիւններ անել։ Ութսունական թւականների երկրորդ կէսից Շուշում կազմվել էր երիտասարդ կուսակցութիւն, որ կենդանութիւն տուեց այնտեղի Բարեգործական ընկերութեան, բաց արեց գրագրան, սկսեց ազդել դպրոցական գործերի վրա։ Ցիշում եմ այդ անմոռանալի ժամանակները։ Կռիւը հին եւ նոր սերունդի մէջ տաք էր, երկարատեւ։ Եւ չեմ յիշում մի դէպք, երբ Եփրեմ Տէր-Ցակոբեանը եղած լինի Շուշում եւ ամեն մի հարցի, ամեն մի ընդհարման մէջ առաջաւոր դիրքը չը լինի գրաւած։ Ժողովրդական գաղափարներով տոգորված մի մարդ, նա անհաշտ, համարձակախօս թշնամի էր աղայական դասակարգի դիմաց։ Վարակիչ էր նրա ոգեւորութիւնը. նա իր եռեւից տանում էր իր ընկերներին, իսկ նրա ընկերները ոչ հարուստներն էին, ոչ փառքի տիրացած ինժեներ ու կարիերիստ համալսարանականները։ Անկախ եւ ինքնուրոյն մտքի տէր էր նա եւ իր շրջանը ընտրում էր այնպիսի անհատներից, որոնք սրբտակից եւ գաղափարակից էին նրան։

Ինչքիր կարող էր անել մի այսպիսի մարդ, եթէ չը կրէր իր մէջ անողոք հիւանդութիւնը։ Կեանքի մէջ նա կը լինէր մի ազնիւ, իդէալիստ գործիչ. այդպէս էր ցոյց տալիս նրա զարմանալի հաստատութիւնը, նրա պարզ ու հասարակ կենցաղավարութիւնը։ Բայց Թո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

Շուշու հրաշքային բժշկութիւնների առիթով

—

Մի քանի ժամանակ է, ինչ խօսվում է հասարակութեան մէջ մի ամերիկայի բժշկի մասին, որ Շուշում հրաշքներ է գործում։ Պատմում էին, ճշմարիտ որ, հրաշալի դէպքեր. իբր թէ նա լոլ է տուել երեսուն տարվայ կոյրի, ոտի է կանգնեցրել 40 տարվայ անդամալոյծի, թէ բժշկում է թոքախտ, հին քամի եւ այլն։ Ու այս բոլորը առանց դեղերի, հիպնոտիզմով միայն։

Մենք չենք ճանաչում այդ բժշկին եւ պէտք է ենթադրել, որ այդ բոլոր լուրերը տարածվել են առանց նրա կամքի, եւ, երեւի, հակառակ նրա ցանկութեան։ Սակայն քանի որ ինքը, պ. բժիշկը, մինչեւ այսօր բացատրութիւն չէ տուել եւ քանի որ այդպիսի լուրերը կարող են միայն մոլորեցնել ժողովուրդը, ուստի պարտք եմ համարում գիտութեան կարծիքն ասել այդ ձեւի հրաշքային բժշկութիւնների մասին։

Հիպնոտիզմով հնարաւոր է բժշկել միմիայն ներվային կամ ինչպէս սխալ ասում են ջղային հիւանդութիւնները, եւ այն էլ այնպիսիները, որոնք առաջ են եկել ուղղակի ներվայնութիւնից կամ հիստերիայից։

Եւ յիրաւի ներվային հիւանդութիւնները երկու տեսակի են բաժանվում։ — Առաջին կարգի հիւանդութիւնները հետեւանք են ուղեղի, կամ ողնուղեղի որ եւ է յարատեւ բորբոքման։ Այս բորբոքումից առաջանում են շատ հիւանդութիւններ.—կուրութիւն, խլութիւն, համրութիւն, անդամալուծութիւն, կաթուածահարութիւն, անհաստատ քայլուածք, ձեռների, ոտների ծռմռումներ, յատոյ ընկնաւորութիւն, կարկամումներ եւ այլն։

Սրանք անբուժելի են համարվում, քանի որ ներվային կենտրոնները բորբոքված են, հիւանդ։

Երկրորդ տեսակի ներվային հիւանդութիւնները իսկական ներվայիններն են կամ հիստերիականներ։ Սրանք հետեւանք են որոշ ներվերի անկանոն գործողութեան կամ նրանց գործողութեան բացակայութեան։ Օրինակ. մի կին յանկարծ համր է դառնում։ Ի՞նչ պատահեց։ Լեզուի ներվը յանկարծ կորցրեց իր գործունէութիւնը, թէեւ նա բոլորովին առողջ է, առողջ է նոյնպէս եւ ուղեղը։

Նոյն տեսակի ներվային անգործունէութիւնից կարող են առաջանալ նոյնպէս եւ ուրիշ շատ հիւանդութիւններ, օր. կուրութիւն, մի թեւի կամ մի ոտի թուլացումն, նոյն իսկ անդամալուծութիւն։

Երկրորդ տեսակի ներվային հիւանդութիւնները պատահում են առհասարակ «ջղային» հիստերիկ կանանց (նոյնպէս եւ տղամարդկանց) եւ վրա են գալիս յանկարծակի, մի որ եւ է սաստիկ յուզմունքից՝ օրինակ սաստիկ վախից, ուրախութիւնից, կսկիծից, բարկութիւնից յատոյ եւ այլն։ Յանկարծ, մի բանից չարացած, կամ վախեցած կնոջ լեզուն բռնվում է, կամ մի ձեռը թուլանում է, եւ այդ դրութեան մէջ մնում է մի վայրկեան, կամ մի քանի օր, ամիս, նոյն իսկ տարիներ։ Մի ուրիշ օր էլ նա վեր է կենում բոլորովին առողջ։

Հիպնոտիզմով հնարաւոր է բժշկել միմիայն այնպիսի հիւանդութիւններ, որոնց հիմքը ներվերի բորբոքում չէ, այլ միայն նրանց գործունէութեան դադարումն է։

Ամեն բժիշկ իր պրակտիկայի մէջ մի քանի այդպիսի հիւանդներ բժշկած է, ու այդ բանը հրաշք չէ համարվում։

Հիպնոտիզմի բժշկութիւնը կատարվում է ներշնչումով։ Հիւանդին գցում են քնած դրութեան մէջ, (այնպիսի կիսաքնած դրութեան, երբ նա ընդունակ է լսել հիպնոսողի ներշնչումը) ու հրամայում են նրան (կամ համոզում), որ նա առողջ է եւ պատուիրում են, որ զարթնելիս չարժէ իր թուլացած անդամը։

Այսպէս, օրինակ, մի հիստերիկ համրի հիպնոսում են (քնեցնում են) ու ասում. «դու համր չես, զարթնելիս այս ինչ բառերը պիտի արտասանես եւ այլն»։ Եւ հիւանդը զարթնելիս խօսում է։ Եթէ առաջին անգամ չաջողվի, ներշնչումը կրկնում են մի քանի անգամ։

Այս ներշնչման վրա է հիմնված նոյնպէս եւ այսպէս կոչված «հաւատով բժշկութիւնը», որի մասին այնքան շատ խօսվեց մի ժամանակ մեծ Շարկոյի հետազօտութիւններից յետոյ *)։

Եթէ Շուշվայ բժիշկն էլ այսպէս է հասկանում եւ բժշկում, նա օրինական կերպով է վարվում։ Եւ եթէ ժողովուրդը հաւատում է նրան, նա կարող է աջող բժշկութիւններ անել։

Բայց նախ, որ իմ յիշած հիստերիկ հիւանդութիւնները, որոնք կարող են ներշնչումով (հիպնոտիզմով) բուժվել, չափազանց հազւադիւտ են, եւ մեր հայերիս մէջ աւելի եւս հազւադիւտ, քան աւելի քաղաքակիրթ ազգերի մէջ, եւ երկրորդ, որ նրանք 30—40 տարի չեն տեւում։

Քանի որ ամենից շատ մեզ անհաւատալի է թւացել 30 տարվայ մի կոյրի բժշկութեան լուրը, մենք պէտք է ասենք, որ կուրութիւնը զանազան պատճառներից է լինում։ Կարող է փչացած լինել ամբողջ ակնախնձորը, կամ աչքի թափանցիկ թաղանթը, կամ թաղանթի եւ տեսի օրգանները, կամ վերջապէս ուղեղը ու տեսողական ներվը։ Ի՞նչ ձեւի հիւանդութիւն է այդ։

Կասենք, որ եթէ բժիշկը մի որ եւ է կոյր է բժշկել, սրա կուրութիւնը չէր կարող ոչ մի կերպով յիշած տեսակներից մէկը լինել. նա կարող էր լինել միմիայն ներվի գործունէական թուլութիւն, այսինքն՝ հիստերիկա,—մի հիւանդութիւն, որը երբէք 30 տարի չէ կարող տեւել։ Գոնէ ոչ մի այդպիսի դէպք չը կայ գիտութեան մէջ։

Ժողովուրդը առանց այն էլ խարխափում է խաւարի մէջ, այդպիսի բժշկութիւնների համբաւն աւելի եւս կուրացնում է, մոռի դարձնում նրան։

Մի կողմից աշխատում ենք լուրջ մտքեր տարածել ամբոխի մէջ, միւս կողմից դուրս են գալիս մարդիկ, որոնք աւելի եւս մոլորեցնում են նրան։

*) Հիպնոտիզմի մասին մանրամասնութիւններ տես՛ք «Հիպնոտիզմ» գրքի մէջ։

քախտը չլատում էր նրան։ Պատահում էին երկար ժամանակամիջոցներ, երբ նա իրան առողջ ու ժիր էր զգում. եւ այդ ժամանակ նա կենսուրախ էր, գործունեայ, ուշադիր դէպի հասարակական կեանքը, օրվայ չարն ու բարին։ Բայց գալիս էին եւ վհատութեան ժամանակներ, երբ հիւանդութիւնը տրորում էր նրան, թէեւ այդ ժամանակներն էլ նա չէր կորցնում իր ոգու ոյժը եւ էլի իր ընկերների մէջ էր։

Ուսումը վերջացնելուց յետոյ Եփրեմ Տէր-Յակոբեանը մօտ մի տարի ուսուցչութիւն արաւ Շուշու թեմական դպրոցում, Լեւոն Սարգսեանի տեսչութեան օրով։ Բայց հայ դպրոցը իր հակառողջական պայմաններով միայն սատկացնել կարող էր նրա հիւանդութիւնը, ուստի ստիպված եղաւ հեռանալ. իսկ երբ սկսվեցին թեմական դպրոցի շուրջը բոլորված ծանօթ խռովութիւնները, Տէր-Յակոբեանը իր ընկերակից ուսուցիչների հետ, չը նայած իր դրութեան, կռիւ էր մղում կղերականութեան դէմ։

Ուսուցչութիւնն էր այն միակ պաշտօնը, որ նա կարողացաւ վարել իր կեանքում։ Այնուհետեւ նա ապրում էր շատ դառն աղքատութեան մէջ, յոյս ունենալով թէ կը կարողանայ յաղթել իր հիւանդութեանը եւ գործ գտնել իր համար։ Վերին ատիճանի պաւասէր եւ ազնիւ լինելով, նա վիրաւորվում էր, երբ նրա ընկերները առաջարկում էին դրամական օգնութիւն։ Մի տարի միայն ապրեց իր ընկերների օգնութեամբ, բայց յետոյ հրաժարվեց նպաստից, ասելով որ շատ ծանր ու անտանելի է իր համար ձրիակեր լինելը։

Վերջին չորս տարիները Տէր-Յակոբեան ապրում էր այն ողորմելի միջոցներով, որ ըստանում էր Բագուի իր ընկերների օգնութեամբ գտած գործից. նրան ուղարկվում էին յատակագծեր, որոնց նա պատրաստում էր իր տանը։ Այդ ժամանակներում նա մտածում էր մի շարք գիտական բրոշիւրներ հրատարակելու մասին։ Դա նրա փայփայած գաղափարն էր, որի մասին շատ է խօսել ինձ հետ։ Մարդիկ, ասում էր հանգուցեալը, գաղաններ են իրար համար այն պատճառով, որ տգէտ են։ Միայն գիտութիւնը կարող է ապացուցանել մեծերի ամբողջ ոչնչութիւնը տիեզերքի, յաւիտենականութեան նկատմամբ. միայն գիտութիւնը զէնք կը տայ հարստահարվածներին, խեղճերին, թոյլերին՝ իրանց իրաւունքները պաշտպանելու, իրանց կեանքը պահպանելու համար։ Բայց անել ժողովրդի աչքերը, գիտութիւն սովորեցնել նրան—ահա փրկութեան միակ միջոցը։

Բայց թոքախտի կրծոտած մի օրգանիզմ, որքան էլ ուժեղ կամք ու բարի ցանկութիւններ լինէին նրա մէջ, չէր կարող այդպիսի մի մեծ գործ կատարել։ Խեղճի այդ ճառերը ընդհատվում էին չարագուշակ հազից եւ նա, բարի ժպիտը բերանին, ասում էր ինձ. «Տեսնում ես, թոքախտը բողոքում է իմ դիտաւորութեան դէմ»։

Եւ նա այդ մտադրութիւնը գերեզման տարաւ։ Նրա գրական գործերից յիշատակենք «Մշակի» մէջ զանազան ժամանակ տպագրված յօդուածները եւ դը-Վարենիի «Օդը» գիտական գործի թարգմանութիւնը, որ հրատարակել է Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը։

Հանգիստ բաղմատանջ ոսկորներիդ, թանգագին, անմոռանալի ընկեր եւ ազնիւ, անբիծ, մինչեւ վերջին շունչը գաղափարական մարդ։ Քո թարմ, աղքատիկ գերեզմանի վրա վշտահար բարեկամներդ եւ ընկերներդ մի աղօթք կարող են մրմնջալ,—որ շատ եւ շատ լինեն քեզ պէս մարդիկ...

Լէօ

ԲԱԳՈՒԻ ՀԱՑՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

II

Ինչպէս յայտնի է, Բագուի Մարդասիրական ընկերութիւնը իր գոյութեան երեսուն եւ հինգ տարվայ ընթացքում գլխաւորապէս զբաղվել է կրթական գործով. նա օժանդակել է ողջ Ռուսաստանում ընակվող հայերի մէջ լուսաւորութիւն տարածելուն, նպաստներ է յատկացրել ուսանողների, յատուկ որդեգիրներ է պահել միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներում, օժանդակութիւններ է արել գիւղական շատ դպրոցների, սեփական դպրոցներ է ունեցել եւ այլն։

Նոր կանոնադրութեան հիման վրա, որ հաստատվել է 1899 թ. յուլիսի 7-ին, ընկերութեան արգելվում է այդ ուղղութեամբ գործել. նրան տրվում է հնարաւորութիւն երկսեռ հայ լուսաւորչականների միմիայն նիւթական դրութիւնը բարւոքելու հոգ տանել—այն էլ բացառապէս Բագու քաղաքում։ Այդ ուղղութեամբ էլ գործել է սկսել ընկերութեան 1900 թ. վարչութիւնը։ Անխտիր բոլոր խնդրատուների խնդիրները գրի են առնվում եւ ժանրամասնօրէն յիշատակվում առանձին մատեանում։ Յիշատակված տեղեկութիւնները վարչութեան կողմից ենթարկվում են վերատուգութեան. վարչութեան անդամները հերթական կարգով գնացել, տեղն ու տեղը ստուգել են խնդրատուների կացութիւնը եւ իրանց դիտողութիւնները կրկին մտցրել նոյն մատեանը։ Վերստուգած տեղեկութիւնների հիման վրա միայն տեղի են ունեցել վարչութեան որոշումները՝ նպաստներ յատկացնելու եւ կամ մերժելու վճիռները։

1900 թ. ընթացքում 1158 խնդիրք է մուտ գործել։ Այդ խնդիրքներից 303 ընկերութիւնից ամսաթոշակ է խնդրում՝ գլխաւորապէս բնակարանի վարձ տալու համար, 315 խնդիրք՝ միանուագ նպաստ՝ ապրուստի համար, 219 խնդիրք՝ ծննդավայր վերադառնալու համար, 57 խնդիրք՝ բժշկվելու համար, 54 խնդիրք՝ չքաւոր աշակերտների համար, 22 խնդիրք՝ օժիտ տալու համար, 23 խնդիրք՝ թաղման համար, 17 խնդիրք՝ զանազան նիւթեր գնելու եւ աշխատանքի ձեռնարկելու համար եւ վերջապէս 148 խնդիրք՝ որ եւ է պաշտօն, որ եւ է աշխատանք ստանձնելու համար։

Վարչութիւնը, աչքի առաջ ունենալով նախահաշիւով հաստատված նպաստների սղութիւնը, վերաբերվել է դէպի խնդրատուների պահանջները աւելի քան խիստ. նա, իր նպաստները յատկացնելիս, առաջնորդվել է ոչ թէ իսկական պահանջներով, ոչ թէ համաձայն հանդէս բերվող անհրաժեշտութեան, այլ յարմարվել է իր սուղ միջոցներին. օգնել, օժանդակել է խիստ ընտրութեամբ, ուրիշ խօսքով, թէեւ վերստուգելուց, քննութեան ենթարկելուց յետոյ, եկել է այն եզրակացութեան, թէ յիրաւի խնդրատուն չքաւոր է, նրա խնդիրը յարգելի է, պահանջները անհրաժեշտ են, բայց այնուամենայնիւ անկարող է եղել այդ անհրաժեշտ համարված պահանջներին լրիւ բաւարարութիւն տալ. տուել է այնքան, որքան կարելի է եղել ըստ իր բիւջէի։

Այդ ընթացքով տրվող նպաստները բաժանվում են երկու տեսակի՝ մշտական, ամսէ ամիս պարբերաբար կրկնվող, եւ միանուագ նպաստներ։

Մշտական նպաստներ տրվել են 417 խնդրատուի՝ ընդամենը 1987 ռուբլի, այդ խնդրատուներից 348 խնդրի դիմաց տրված է 1647 ռուբլի, բնակարանների եւ ապրուստի համար. 69 խնդրատուի տրված է 340 ռուբլի՝ Բագուում սովորող չքաւոր աշակերտների համար հանդերձեղէններ եւ դասական պիտոյքներ գնելու համար։ Հիմնվելով վերոյիշեալ թուերի վրա, միջին թուով մի մշտական նպաստը՝ ապրուստի եւ բնակարանի վարձի համար՝ հասնում է ամսական 4 ռուբլի 35 կոպէկի, իսկ չքաւոր աշակերտների համար տրված նպաստը՝ 4 ռուբլի 4 կոպէկի։

Միանուագ նպաստներ տրված են 213 խնդրատուի, ընդամենը 1638 ռուբլի 94 կոպէկ, որից 106 խնդրատուի 520 ռուբլի 77 կոպէկ ապրուստի համար, իսկ 107 խնդրատուի՝ 1118 ռուբլի 18 կոպէկ ճանապարհածախս՝ ծննդավայր վերադառնալու համար։

Ծննդավայր վերադառնալու համար ճանապարհածախս խնդրողներին կարելի է բաժանել երկու տեսակի. մի տեսակը, որ խնդրողների մեծագոյն մասն է, կազմում են «գաղթականներ» կոչված շրջմոլիկները, միւս տեսակը՝ անհամեմատ փոքրագոյն մասը, Կովկասի զանազան կողմերից գործ գտնելու յուսով Բագու եկած պանդուխտներ։

Շրջմոլիկների տասնեակաւոր ընտանիքների անդամներ շարունակ դիմում են առանձին-առանձին, խումբ-խումբ, աղերսում, լալիս, օգնութիւն, գթութիւն խնդրում։ Ընկերութեան վարչութիւնը որոշում է անմիջապէս ստուգել նրանց իսկութիւնը։ Երեւան է հանվում սոսկալի իրողութիւնը։ Քաղաքի յետ ընկած մասերում, զանազան №-ներ անուանված խուղերում, մէկ-մէկու վրա թափթփված՝ բնակվում են ընտանիքներ, ամեն մի №-ում մի քանի ընտանիք, յաճախ բոլորովին օտար, անծանօթ ընտանիքներ։ Այդ №-ներում դուք տեսնում էք եւ՝ ծեր, եւ՝ երիտասարդ, եւ՝ պառաւ երկուսական սկեսուր, եւ առողջ-մատաղահաս հարս, ամուրի, ձեռքից կամ ոտքից զրկված երիտասարդ, 15—16 տարեկան ծաղկափթիթ օրիորդներ, պատանիներ, ծծկեր երեխաներ եւ նոյն իսկ երկունքի ենթակայ դարձած, երեսները ծածկած, անկիւններում կուչ եկած կանայք։ Դրանք, բաղդի այդ խաղալիքները, մերկ յատակի վրա թափթփված, քնում են եւ միասին, առանց տեղաչորի... Կեղտն ու գարշահոտութիւնը լրացնում են ամեն ինչ։ Աւելացրէք դրանց վրա եւ հիւանդներ, մի կտոր թաղիքի տակ կծկված զառամեալներ, որոնք հազիւ հազ գլուխ վեր քաշած՝ օգնութիւն են հայցում, արտասուաթոր աչքերով աղաչում-պաղատում են ազատել «այս դժոխքից», ճանապարհ զցել, որպէս զի կարողանան ցանկացած ժամանակ գոնէ «պաղ», «յստակ» ջուր խմել...

Ի՞նչ սիրտ կարող է չը մղկտալ, որպիսի գութ կարող է չը շարժվել լսելով այդպիսի խօսքեր։ Ընկերութեան վարչութիւնը շատպում է բօպէ չը կորցնել. ցուցակագրում, աշխատանքի ընդունակներին զատում է, իսկ ծերերին, անընդունակներին ճանապարհ գցում՝ տալով նրանց յատուկ վագոնի տոմսակ եւ երկերկու, երեք-երեք բուբլի ծախսի փող։ Վարչութիւնը իր փորձերի վրա հիմնված՝ որոշած ունի ծննդավայր գնացողներին տալ երկաթուղու տոմսակ, այն էլ երկաթուղու կայարանում, գնացքի ուղեւորվելուց մի քանի բօպէ առաջ, որովհետեւ պատահել են դէպքեր, որ վարչութիւնից տոմսակի փող են առել ճանապարհվելու համար, բայց չեն ճանապարհվել, կամ գնած տոմսակը—եթէ առաջուց է տրված լինում—կիսագին ուրիշներին են վաճառել...

Ինչպէս ասացինք, ճանապարածախս պահանջողների երկրորդ տեսակին պատկանում են զանազան տեղերից գործ գտնելու յուսով Բագու եկած պանդուխտները։

Բագուի հռչակը արդէն յայտնի է. բայց այդ հռչակը, ինչպէս ապացուցվում է, ուրիշ կերպ է ըմբռնվում հեռու գաւառներում։ Ընդհանուր կարծիք է կազմված, որպէս թէ ով Բագու գնայ, անպատճառ պիտի հարստանայ, այն էլ հեշտ կերպով, որովհետեւ հարուստ քաղաք է, որովհետեւ շատ շատերը հարստացել են, հէնց այս պատճառով էլ տեղից վերկացողը Բագու է դիմում առանց հանգամանքներին տեղեակ լինելու, առանց նոյն իսկ մի քանի շաբաթվայ համար գտնէ ապրուստի միջոց ունենալու։ Ճանկալի է, որ յիշած բժիշկը ինքը հերքէր այս բոլոր անտեղի լուրերը։ Դրանով նա թէ պահպանած կը լինէր իր պատիւը եւ թէ կը ցրէր ժողովրդի մէջ տարածված լուրերը։

Բժշկ. Վ. Արծրունի

ԱԳՈՒԼԵՑԻՆ ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

—

Ագուլիսի մէջ ապրող Ագուլեցու բնաւորութեան գլխաւոր գիծը բամբասանքն է, բայց երբ մի անգամից ապականվեց մարդու ուղեղը, նա ընդունակ է դառնում ամեն տեսակ ախտեր ծնելու։ Զկամութիւնը, եսասիրութիւնը, բուսական կեանքը իր ամբողջ մերկութեամբ տիրում է Ագուլիսում։ Ընկերական-հասարակական կեանքը բացարձակ կեղծով այստեղ բացակայում է։ Ագուլեցին մի իդէա ունի՝ ինքը լաւ ապրի։ Նա չէ ընդունում, որ հասարակութիւնը մի օրգանական ամբողջութիւն է կազմում եւ օրգանի ամեն մի մասը դէպի իրան քաշելով քայքայում է ամբողջ օրգանը եւ ինքն էլ քայքայվում է նրա հետ։ Նա չէ հասկանում, որ ձեռքերը երբ աշխատում են՝ մի եւ նոյն ժամանակ թէ ամբողջ մարմնի համար են աշխատում եւ թէ մասնաւորապէս իրանց համար։ Հայրենակիցներ, երեւակայեցէք ինչ կը լինի այն ձեռքի դրութիւնը, որ կերակուրը իր մատների մէջ է սեղմել եւ բերանը չէ տանում մտածելով, որ եթէ բերանը տանէ՝ մարմնի միւս անդամներն էլ կօգտվեն։ Այդպիսի ձեռքը կը թուլանայ, անոյժ կը չորանայ եւ կերակուրը ոչ միւսներին կը հասնէ, ոչ էլ իրան։

Բայց նա այդ չէ մտածում։

Օրինակ, Ագուլիսում նստած է մի դեղագործ, որը գրվում է հասարակութիւնը, որը բացի դեղի գնից, բացի բոլոր ծախսերից, 20—30 տոկոս էլ աւել է վերցնում. ամեն մի ագուլեցի, մանաւանդ հարուստը, մտածում է՝ ինչ բան ունիմ նրա դէմ խօսեմ. ինքս մի քանի կոպէկ աւել եմ տալու, թող վերցնի կորչի. բայց երբ տանը խրոնիքական հիւանդ է ունենում, այն ժամանակ է զգում, որ ինքն էլ կողոպտվել, ինքն էլ տուժել է. եւ երբ ժամերով սպասում է, որ մինչեւ դեղագործը արթնանայ եւ դեղ տայ՝ այն ժամանակ է միայն բղաւում, ճղաւում։ Բայց բղաւողը մէկն է, այդ բօպէին իր կաշի վրա զգացողն է. իսկ հասարակութիւնը ասում է՝ ես ինչ բան ունեմ, ինչու ինձ համար գըլխացաւանք ստեղծեմ։

Բաւական է. մենք չենք ուզում էլի երկարացնել, նկարագրելով թէ ինչպիսի ժամանակ են անցկացնում քիչ աւելի երիտասարդները. բաւական է ասել, որ նրանց գլխաւոր պարապմունքն է թղթախաղութիւնը եւ կերուխումը։ (Ագուլեցիների ա՛քը լոյս, արդէն գինեվաճառանոց էլ է բացվել). կան մարդիկ, որոնք գազան դառած ապրում են թղթախաղով միայն։ Այդպիսիների համար գոյութիւն չունի ոչ ընտանիք, ոչ էլ հասարակական այլ հետաքրքրութիւն։

Ճիշդ է, Ագուլիսում ապրող ագուլեցիների մէջ հատ ու կենտ անձնաւորութիւններ կան, որոնք մաքուր են եւ չեն բամբասում, աւելի բարձր են եւ չեն նմանում ագուլեցիներին. բայց միայն այդքան։ Նրանք խրված են Ագուլիսի թանձր մթնոլորտում եւ անշարժ են. նրանք զգում են իրանց բարձրութիւնը շրջապատից, բայց այնքան ոյժ չունեն, որ թեւերը շարժեն այդ թանձրութեան մէջ եւ թէեւ ապրում են ազնիւ եւ աւելի լաւ կեանքով, բայց միայն իրանք իրանց համար։

Մինչ այստեղ խօսեցինք Ագուլիսի այն հասարակութեան մասին, որի բնաւորութիւնը կազմված է նահապետական եւ քաղաքակիրթ աշխարհի կեղտերի շաղախից, որը մոռացել է նահապետական պարզութիւնը, բարքերի լաւ կողմերը եւ չէ ստացել քաղաքակրթութեան արժանիքները։

Այժմ խօսենք այն դասակարգի մասին, որը պէտք է ստեղծէ ցանկալի նոր կեանքը։ Հասկանալի է, խօսքը ուսանող դասակարգի մասին է։

Ամառը Ագուլիսը արտասովոր կենդանութիւն է ստանում։ Կարդացող դասակարգի հոսանք է մտնում Ագուլիս եւ կեանքը եռում է, բայց այստեղ ուրիշ կերպ է եռում կեանքը. երիտասարդը քաղաքներից իր հետ թարմ, կազդուրիչ հոսանք չէ բերում. միայն քաղաքի կեղտոտ զուարճանալու ձեւն է բերում խառնելու տեղական զուարճութիւնների հետ։

Քէֆերից աչք չէ բաց անում երիտասարդը։ Ամեն օր, բառիս ճիշդ մտքով, Ագուլիսի ջահէլները գինու քէֆի մէջ են այս ու այն մոտակայ գիւղերում, կամ ուխտատեղիներում, կամ միմեանց տներում՝ խնճոյքներում, հարսանիքներում։ Պատեցէք սեղանների շուրջը եւ կը լսէք անտանելի զուարճախօսութիւններ, եւ դատարկամիտ խօսակցութիւններ։ Մթէ դրանք, որ հաւաքվում են Կովկասի զանազան մեծ քաղաքներից եւ Ռուսաստանի մայրաքաղաքներից ու այլ տեղերից, միայն դատարկ անէկդոտներ ունեն միմեանց հաղորդելու. մթէ միմեանց պատմելու եւ սովորեցնելու այլ բան չունեն, ուրիշ բան չեն տեսել։

Եւ կը տեսնէք, որ այդ ապագայ ինտելիգենտը հարբած, կարմրած աչքերով, թղթախաղի սեղանի առաջ ծխախոտը բերնին իր եռանդն է վատնում։ Նոյն անմիտ խօսակցութիւնն է տիրում եւ զբօսատեղիներում, եւ շուկայում ու պօստի օրերը պօստատան առաջ, ուր հաւաքվում են երիտասարդները։

Այս է Ագուլիսի ուսանող դասակարգի երեք ամսվայ ընթացքում վարած կեանքը։ Միակ արած կարգին բանն է՝ Աստուածածնի տօն օրը եղած ներկայացումը, այդ էլ, ի հարկէ, միայն թեթեւ զուարճութեան համար է։

Իսկ ինչու ագուլեցի ուսանող-կրթված դասակարգն էլ այդքան թերի է։ Պատճառը վերը ասացինք՝—կեղտոտ ճահճից գեղեցիկ պտուղներ չեն քաղում։

Բայց մթէ Ագուլիսը չէ տուել ինտելիգենտ մարդ կամ գործիչներ՝ կեանքի զանազան ասպարէզներում. տուել է, բայց դրանք Ագուլիսի հասարակութիւնից դուրս նետված անձնաւորութիւններ են, դրանք ոչ մի կապ չունեն Ագուլիսում մշտական ընակութիւն ունեցող ագուլեցու հետ, չեն ապրում ագուլեցու կեանքով եւ ոչ էլ ապրում են Ագուլիսում։

Այդպիսի մարդու համար ագուլեցու շրջանը օտար է, նրանք ապրում են ուրիշ շրջանում եւ ուրիշ կեանքով, թէեւ ագուլեցին, տեղը եկած ժամանակը, պարծենում է դրանցով։

Այս վերջիններին նայելով՝ մարդ գոնէ երեսը բոլորովին յուսահատ ետ չէ շրջում եւ սպասում է, որ Ագուլիսի ուսանող դասակարգը գէթ կուղղվի, դէպի լաւը կը գնայ եւ մայր գիւղի համար կը ստեղծէ նոր կեանք։

Ռօժէր

Վ. Ագուլիս.

նապարածախս գտնելով ուղեւորվում են՝ հաւատացած լինելով թէ բաւական է, որ Բագու հասնին. իսկոյն եւ եթ գործ, պաշտօն կը գտնեն։ Բայց իրականութիւնը հակառակ պատկեր է ներկայացնում։ Նախ՝ Բագուում գործ ունեցողները բոլորեքեան հարուստ չեն. կան ծառայողներ, աշխատողներ, որոնք տասն, քսան տարի ծառայութիւն անելով հանդերձ, դարձեալ հազիւ են ծայրը ծայրին հասցնում. երկրորդ՝ շատ-շատերը եթէ կարողանում են գործ-պաշտօն գտնել, այդ շնորհիւ ազգակցական, բարեկամական կապերի եւ երրորդ՝ պէտք է պատրաստված լինել տեղական պահանջների համար. անհրաժեշտ է նաւթարդիւնաբերութեան տեխնիկայի հետ գոնէ քիչ ծանօթութիւն ունենալ։ Այժմ հանգամանքները փոխվել են, մրցութիւնը սաստկացել է։ Առաջներում պարապ մարդիկ չէիք գտնի Բագուում, գործակատար, ծառայող գտնելու համար պէտք է որոնէիք, թէկուզ անփորձ մարդ, որ գործերի հետ ծանօթ էլ որ չը լիներ, փոյթ չէր, իսկ այժմ, որքան կամենաք, պարապ մարդիկ կան ամեն տեսակի, սկսած բարձրագոյն կրթութիւն ստացածներից մինչեւ մշակութիւն անել ցանկացողները։ Օր չէ պատահում, որ մի քանի մարդ չը դիմեն, գործ չը խնդրեն։ Այդ անում են եւ՝ քաղաքում, եւ՝ Սեւ քաղաքում, եւ՝ Բալախանի։ Ոչ միայն նորերը, անփորձները, այլ նոյն իսկ փորձված, տարիներով ծառայած կառավարիչները, գործակատարները պարապ են մնում ամիսներով, չեն կարողանում գործ գտնել...

Հէնց այդ պատճառով էլ նորեկներից շատերը իրանց սխալը արդէն ուշ են զգում, այն ժամանակ, երբ այստեղ տկարութիւնների են հանդիպում, երբ գործ դրած սկզբնական ջանքերը ի դերեւ են ելնում, երբ ունեցած փողերը վերջանում են եւ յուսահատութեան մատնվում։ Շատերից մի օրինակ։ Երկու կին Ալէքսանդրոպոլից գալիս են Բագու, որպէս զի լուացարարութիւն անեն։ Նրանք հաւատացած են լինում, թէ անշուշտ մեծ աջողութիւն պիտի գտնեն Բագուում, որովհետեւ Բագուի լուացարարուհիները մի շապիկ լուանալու համար 20—25 կոպէկ են ստանում, իսկ իրանք այդ 20—25 կոպէկով ամբողջ օր Ալէքսանդրոպոլում լուացք են անում ուրիշների համար։ Իսկ թէ Բագուում ինչ տեսակ շապիկ լուանալու համար են 20—25 կոպէկ ստանում, ինչ տեսակ են շոր լուանում, որքան ջրի, ածուխի համար փող են վճարում, տան ինչ վարձ են տալիս—այդ մասին չեն էլ անգամ մտածում այդ կանայք։ Գալիս են եւ ոչ միայն անաջողութեան հանդիպում, այլ քաղցածութեան... Գոնէ արտասուաթոր աչքերով այդ էին մրմնջում, երբ Մարգասիրական ընկերութեան օգնութեան էին դիմել՝ իրանց «վաթանը» ճանապարհելու համար։

Ն. Դաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, մարտի 1-ին, Վրաստանի Էկզարխի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսր Ալէքսանդր II-ի համար։ Հոգեհանգստին ներկայ էին երկրիս բարձր իշխանութեան ներկայացուցիչները եւ բազմաթիւ ժողովուրդ։

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան ցուցահանդէսի շինութեան համար արդէն մշակված է մանրամասն յատակագիծ։ Ցուցահանդէսի մուտքը պէտք է լինի Ելիզավետեան փողոցից։ Շինութիւնները պէտք է կազմված լինեն մի գլխաւոր շինութիւնից, որի մէջ զետեղված կը լինեն գլխաւոր բաժինները, եւ բազմաթիւ առանձին պավիլիոններից։

—

Անդրկովկասեան նաւթանցքը, որ այժմ գոյութիւն ունի Բաթումի եւ Միխայլովո կայարանների մէջ գտնվող ապարծութեան վրա, պէտք է շարունակվի Միխայլովո կայարանից մինչեւ Ադ-Թաքլիա կայարանը։ Նաւթանցքի շարունակութեան համար նշանակված է $1^1/_2$ միլիոն ռուբլի։

—

Առաջիկայ ամառվայ ընթացքում ռուսաց զինուորական նաւատորմի շոգենաւերում պէտք է փորձեր անեն իրրեւ վառելիք գործածելու նաւթ։ Այդ փորձերի սկիզբը դրված է դեռ անցեալ տարիներից։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բոգոլէպովի կեանքի դէմ Գովելի քաղաքացի Պեսար Կարպովիչի գործած սպանութեան փորձի քննութիւնը վերջացած է արդէն եւ շուտով կը ներկայացվի Պետերբուրգի դատաստանական պալատին։ Դատի քննութիւնը նշանակված է մարտի 3-ին, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ եւ դատաստանական պալատի աւագ-նախագահ Դէյտրիխի նախագահութեամբ։

—

Ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վիճակագրական կոմիտէտը մօտ օրերումս վերջացրեց իր սովորական տարեկան ընդհանուր հաշիւը Ռուսաստանում արտադրված հացահատիկների քանակութեան մասին։ Վերջին հաշիւը վերաբերում է 1900 թուականին։ Նրանից երեւում է, որ հացահատիկների ընդհանուր քանակութիւնը 72 նահանգներում եւ շրջաններում հասել է 1900 թուին 3,481,395,400 պուդի, որից 1,631,616,700 աշնանացան, իսկ 1,849,778,700 գարնանացան։ 1899 թուի հետ համեմատելով՝ դուրս է գալիս, որ 1900 թուին ստացվել է 191,922,000 պուդ պակաս, քան նախորդ տարին, սակայն համեմատելով 1900 թուին ստացված հացահատիկների քանակութիւնը վերջին հինգ տարիների (1895—1899) ընթացքում ստացվածների միջին թուի հետ, երեւում է, որ 1900 թուինը գերազանցում է նրանից 10%-ով, որի հիման վրա եւ կենտրոնական վիճակագրական կոմիտէտը 1900 թուի հունձը համարում է բոլորովին բաւարար։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Օրիորդ Թ. Սունդուկեան, որ երկու տարի առաջ Թիֆլիսում մեծ աջողութեամբ բեմ դուրս եկաւ Ց. Սունդուկեանի «Սիրտ» պիէսում, այս տարի վերջացնում է իր ուսումը Մօսկվայի դրամատիքական կուրսերում եւ վերադառնալու է Թիֆլիս։ Օրիորդը որոշել է նուիրվել հայ բեմին»։

—

ՄԱՅԿՕՊԻՑ մեզ գրում են. «Անցեալ օրերը այստեղ էին եկել մեր թափառական դերասաններից երկուսը՝ պ. պ. Պարոն-Սարգսեան եւ Ախլաթեան, որոնք բարեկենդանի վերջին օրը մի հայերէն ներկայացում տուին Պուշկինեան տան թատրոնական ընդարձակ դահլիճում։ Ժողովուրդ շատ կար. կային եւ մի քանի ռուսներ։ Խաղացին երկու պատկեր «Սամէլ» ողբերգութիւնից եւ «Խեչոյի Թուզը»։ Մի կողմ թողնելով երկար ու բարակ քննադատութիւնը, կասեմ միայն, որ դերասանների խաղը ընդհանրապէս անբաւարար էր։ Հայերէն ներկայացումը Մայկոպի նման քաղաքներում մի վերին աստիճանի հազագիւտ երեւոյթ է. եւ մեր դերասաններին խորհուրդ կը տայինք, որ մի փոքր աւելի խնամքով վերաբերվէին իրանց գործին եւ աշխատէին տալ հասարակութեանը մի քիչ էլ գեղարուեստական բաւականութիւն»։

—

ՇՈՒՇՈՒՅԻ մեզ գրում են. «Մի ամիս առաջ տեղի ունեցան քաղաքային կլուբում աւագների ընտրութիւններ, որոնք զանազան թիւրիմացութիւնների եւ անկանոնութիւնների պատճառով անհետեւանք մնացին։ Այսօր նշանակված է նոր ընտրութիւն։ Ցանկալի է, որ այս անգամ գոնէ ունենանք աւելի գործունեայ, աւելի արթուն աւագներ, մանաւանդ՝ մի հաշուագէտ, անշահասէր գանձապահ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ, փետրվարի 22-ին

Օրիորդ Վէրա Ժիլօ ռուս ուսանողուհուն՝ Պարիզի Քոլէժ դը-Ֆրանսի դասախօսներէն պ. Էմիլ Դէշանէլի վրա ըրած սպանութեան փորձի մասին գրած էի ասկէ առաջ։

Այս ցաւագին խնդիրը իր լուծումը ստացաւ կամ գրեթէ ստացաւ։ Դրամէն քսան օր վերջ օր. Ժիլօն եւ պ. Դէշանէլ երես երեսի բերին։ Օր. Ժիլօ այդ գործողութեան պահուն յայտարարեր է, որ ինք սխալված է եւ թէ պ. Դէշանէլ զինքը նախատող մարդը չէ։

Բայց այս մութ խնդրին մէջ ֆրանսական արդարութիւնը այնքան դանդաղում, այնքան չկամութիւն դրաւ, որ՝ հակառակ ռուս ուսանողուհիին խոստովանութեան՝ թէ ինք սխալված է, ֆրանսական թերթերէ ոմանք կը տարակուսին երեսփոխանական ժողովի նախագահին հօրը բացարձակ անմեղութեան վրա։ Ու այնպէս հասկցնել կուզեն, թէ օր. Վէրա Ժիլօի վրա ճնշում բանեցուցած են պ. Դէշանէլի նկատմամբ նպաստաւոր յայտարարութիւն մը ընելու համար։ Հաւատացէք, որ ինձի բոլորովին անկարելի եղաւ ճամբաս գտնել այս լաբիրինթոսին մէջ։ Հետեւաբար կը զգուշանամ այս կամ այն կողմին հակելէ, պ. Դէշանէլի յանցապարտութիւնը կամ անմեղութիւնը հաստատելէ։ Միայն թէ հարցում մը զիս կը չարչրկէ։ Ենթադրելով որ յարգելի պրոֆէսորը մեղաւոր էր, ֆրանսական արդարութիւնը ինչ վարմունք պէտք է ունենար։ Լուծումը ընթերցողին հնարամտութեանը կը թողնում։

Օր. Վէրա Ժիլօ 1880 թ. նոյեմբերի 28-ին Նիքօլաեվի մէջ ծնած է եղեր։ Իսկ այժմ ծը-նողքը կը գտնվին Օդէսա, ուր հողային կալուածատէրի պատուաւոր դիրք ունին եղեր։ Իր դժբաղդ ընկերուհին՝ օր. Ալէքսանդրին Զէլէնինա ողջ է. թերթերէ ոմանք կըսեն թէ ալ վտանգէ ազատ է՝ իսկ ուրիշներ—թէ կայութիւնը ծանր է։ Աստուած իմ, որուն հաւատալ, ո՞րն է ճշմարտութիւը։ Թէ՞ ճշմարտութիւնը, մարդու պէս, երկու երես ունի։

Երէկ, Օթէլ-Դիէօի հիւանդանոցին մէջ օր. Ժիլօ եւ օր. Զէլէնէինա դէմ դիմաց բերին։ Երկու ուսանողուհիներն այ չափազանց յուզուեր են։ Օր. Վէրա Ժիլօ լալագին թողութիւն խնդրեր է իր բարեկամուհիէն։

Դատաւորը վիրաւոր երիտասարդուհիին հարցուցեր է, թէ օր. Վէրայի արարքին միակ զոհը ինք ըլլալով, կընդունի՞ որ անոր դէմ դատ բացվի։

Օր. Զէլէնինա պատասխաներ է.

—Չէ, չէ, երբէք չեմ ընդունիր։ Ընդհակառակը, ցերմապէս կը փափագիմ, որ բարեկամուհիս ազատ արձակվի։

Ու երկու ընկերուհի իրարու գիրկ նետուեր ու զիրար համբուրեր են։

Այս յուզիչ արարողութենէն ետք, օր. Վէրա Ժիլօ բանդ առաջնորդվեր է։

Ֆրանսայի էն ազանդաւոր ու էն սիրուն օրագրողուհիներէն մէկը, սր. Ժան Բրէմոնտիէ, Սէն-Լազարի բանտը՝ օր. Վէրա Ժիլօյի այցելելով, շատ հետաքրքիր ու շատ շահեկան յօդուած մը նուիրած էր իր տեսակցութեան մասին։

Յօդուածը երկար ըլլալով, կարելի չը պիտի ըլլայ զայն ամբողջովին ներկայացնել։ Անոր ամենէն աչքի ինկող մասերը ահաւասիկ։

Նկարագրելէ ետք օր. Ժիլօն դէմքի, հագուստի-կապուտի տեսակէտով՝ օրագրողուհին կը հարցնէ.

«Ի՞նչ էր Վէրա Ժիլօյի մտադրութիւնը։ Թերեւս այդ բանը երբէք չը պիտի գիտնանք, որովհետեւ իր հոգեբանութիւնը՝ անտարակոյս շատ բարդ՝ մեր լատինի ուղեղներուն վերլուծումէն կը խուսափի։ Մեզի համար իր արարքը յաւիտեան անբացատրելի պիտի մնայ, եթէ երբէք ինքը՝ իր բերնովն իսկ չը յայտնէ շարժառիթը՝ որուն հնազանդեցաւ ծանօթ դրամին մէջ։ Բան մը, որ ինձի տարակուսելի կը թուի։

«Պ. Մարսէլ Պրէվօ իր «Զօրաւոր Կոյսի» (Vierge forte) գործին մէջ նախատեսած ըլլալ կը թուի պատուոյ զգացումի այն զայրացումը, որ կեանքի բոլորովին մասնաւոր պայմաններու մէջ զետեղված կարգ մը կիներու նկարագրին հիմը կը կազմէ։

«Օր. Վէրա Ժիլօյի երէկ ինձի ըսածին համեմատ, իր միակ իդէալը ուսումնասիրութիւնն է ու իր միակ զուարճութիւնը՝ իր բարեկամուհիին՝ օր. Ս. Զէլէնինայի հետ դասախօսութիւններու կամ բանախօսութեանց ներկայ գտնվելն է։ Որքան որ ալ ուսումնասէր ըլլան երիտասարդ ֆրանսուհիները՝ միշտ իրենց սրտին խորը կը պահեն կտոր մը բանաստեղծութիւն ու յաճախ, պատմութեան ու բնալուծութեան դասի ժամանակ, այն սիրուն երիտասարդին կը խորհին, որ իրենց կը սպասէ դուռան առջեւ ու զիրենք մինչեւ տուն պիտի առաջնորդէ խելօք։

«Զօրաւոր կոյսերը ապահովաբար զանոնք պիտի ամբաստանեն իբրեւ թեթեւ ու վիպային. այս վէպն ալ սակայն ուրիշի մը չափ արժէք ունի եւ եթէ քիչ մը արցունքի պատճառ կըլլայ, գէթ մինչեւ ոճրադատ ատեանի նստարանը չառաջնորդեր։

«Օր. Վէրա Ժիլօյի հետ խօսակցելով՝ աշխատեցայ, եթէ ոչ ճանչնալ բացարձակ ճշմարտութիւնը Կօլէժ դը-Ֆրանսի դրամին մասին, գէթ անձնական գաղափար մը կազմել այս դէպքին վրա ու մտիկ ըրի ուշադրութեամբ այն յայտարարութիւնները, զոր երիտասարդ ռուսուհին հաճեցաւ ինձի ընել։

—Ինչ որ ալ ըլլայ, ըսաւ ան ինձի բացայայտօրէն, երբէք գաղտնիքս չը պիտի յայտնեմ, որովհետեւ իմ կողմէ բարոյական վատութիւն մը պիտի ըլլար քօղամերկել կեանքիս դժբաղդութիւնը։ Ի՞նչպէս կուզէք որ օտարներու պատմեմ բան մը՝ զոր իմ ամենէն մտերիմ բարեկամուհիիս չը կրցայ ըսել։ Կրած նախատինքիս բնութիւնը այնպէս է, որուն վրա տակաւին այսօր առանց սարսափի չեմ կրնար խորհել։ Երբ քանտէն ելլեմ, հաւատացէք, լաւագոյն բանը անձնասպան ըլլալս է։

—«Խենդութիւն է. ենթադրելով որ մինչեւ եղեռնադատ ատեանին առջեւ կելլէք, անկասկած, անպարտ պէտք է արձակուիք։

—«Ի՞նչ է եղեռնադատ ատեանը, հարցուց օր. Վէրա Ժիլօ։

—«Իրեն յիշեցուցի «Ցարութեան» առաջին գլուխները, Տօլստոյի հիանալի նկարագրութիւնը, ու անմիջապէս հասկցաւ։

...«Շատ յուզված՝ բաժնուեցայ այս երիտասարդուհիէն, որուն գաղափարները կը զարմացնեն ու կը վրդովեն զիս ու որ շարժած կը թուի ըլլալ իր գիտակցութեան օրէնքին համեմատ ու կատարեալ անկեղծութեամբ...

Անիկա «զօրաւոր կոյսն» է, անհաւատալի ու մոլորած կինը, զոր նկատած է Մարսէլ Պրէվօ։ Իբսէնի հերոսուհիներու ընտանիքէն է՝ այն խեղճ պուպրիկներէն՝ ջլախտաւոր ու հիւանդ՝ զորս իրենք իրենցմով ապրելու փափագը՝ իրենց ուղեղը խանգարելու ատիճան՝ կը չարչրէ»։

Խեղճ Վէրա Ժիլօն քանի քանի անգամ բանտին մէջ, ուր գիշերը աւելի մութ է ու մտածումը աւելի ցաւագին, կսկիծով խորհեցաւ արդեօք իր դժբաղդ բարեկամուհիին, Զէլէնինայի վրա, որ Օթէլ-Դիէօի սենեակներէն մէկուն անկիւնը մահվան դէմ կը կռւի։ Քանի քանի անգամ իր տենդէ բռնկած գլուխը ձեռ ու ոտներուն մէջ առած՝ գիշերները ճերմկցուց, աշխատելով հեգել խորհրդաւոր բառերը դժնդակ ճակատագրին, որ իր կեանքին ծիծաղը յաւէտ սպանելէ չը բաւականացած, զինքը հրեց ակամայ, գարշելի ու ոչ մէկ գնով չը գործուելիք ոճիրի մը մէջ։

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«New-York World» լրագրում տպագրված է մի հեռագիր Պարիզից, որ, ամենաճիշտ տեղեկութիւններ ունեցող աղբիւրներից քաղելով, հաւատացնում է, թէ Իտալիան շուտով դուրս կը գայ երեքպետեան դաշնակցութիւնից եւ ապա նոր երեքպետեան դաշնակցութիւն կը կազմէ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ։ Ապա Նիւ-Եօրկի լրագրի թղթակիցը պնդում է, թէ գերմանական եւ աւստրիական կայսրները մի քանի օր առաջ դիմեցին Իտալիային մի յայտագրով, որի մէջ բացատրութիւններ էին պահանջում նրանից, եւ թէ Հռոմից ստացվեց խիստ որոշ պատասխան։ Մինչեւ անգամ նոր դաշնակցութեան մանրամասնութիւնները, թղթակցի ասելով, արդէն համարեա վերջնականապէս մշակված են։ Դաշնակցութեան պաշտօնական յայտարարումը տեղի կունենայ շատ չուտով—երբ իտալական նաւատորմը կայցելէ Ֆրանսիական ջրերը։ «New-York-World» լրագրի ասելով՝ Իտալիայի վճռի արագացման վրա ազդել են գերմանական կայսրի ճանապարհորդութիւնը դէպի Անգլիա եւ նրանից առաջացած փոփոխութիւնները իրերի դրութեան մէջ։ Իտալական մամուլը թէեւ ոչ մի խօսք չէ ասում առ այժմ այս նոր երեքպետեան դաշնակցութեան մասին, բայց չափազանց խիստ լեզու է բանեցնում Աւստրիայի եւ Գերմանիայի դէմ։ «Arado» նկատում է, թէ Իտալիան 46 տարի ծանր ճնշման տակ էր գտնվում եւ թէ երիտասարդ թագաւորը պէտք է բարելաւէ այդ դրութիւնը։ «Թէպէտեւ—ասում է լրագիրը—թագաւորը կարող է ցանկութիւն ունենալ, որ այժմեան երեքպետեան դաշնակցութիւնը շարունակէ իր գոյութիւնը եւ ապագայում, բայց նա ստիպված կը լինի հրաժարվել այդ մտքից, որովհետեւ իտալացիները ամբողջ ազգով զզուանքի զգացմունք են միայն տածում դէպի երեքպետեան դաշնակցութիւնը»։ Այս նոյն հարցի մասին Բերլինից հեռագրում են «Рус. Вѣд.» լրագրին. «Իտալական պարլամէնտում փետրվարի 23 ին տեղի ունեցած վիճաբանութիւնները երեքպետեան դաշնակցութեան մասին մեծ տպաւորութիւն գործեցին այստեղ։ Արտաքին գործերի մինիստր Պրինէտտի ոչ մի խօսք չասաց ի պաշտպանութիւն երեքպետեան դաշնակցութեան. պատգամաւորները, նոյն իսկ մինիստրական կուսակցութեան պատկանողները, եռանդով ծափահարում էին Գվէրչի արմատականին, որ խիստ լեզուով յարձակվում էր գերմանական խոյոր կալուածատէրերի վրա, որոնք առեւտրական դաշնագրերը անհնարին բան են դարձնում, եւ ապացուցանում էր, թէ առանց առեւտրական դաշնագրի երեքպետեան դաշնակցութեան վերանորոգումը մի մեծ դժբախտութիւն կը լինէր Իտալիայի համար»։

—Հռոմից հեռագրում են «Kurier Wasawski» լրագրին, թէ Բիս-Ժանէյրոում ձերբակալված են իտալիացի 20 անիշխանականներ, որոնք դաւադրութիւն էին կազմել իտալական թագաւորի կեանքի դէմ։ Ձերբակալվածները մատնեցին իրանց ընկերներից մէկին, որ Մօնտէ Վիդէօից ճանապարհ էր ընկել Գենուա»։

—Բ. Դուռը, ինչպէս լսել է «Politiche Correspondenz» լրագիրը, իր դեսպանների միջոցով դիմել է Կրէտէի հովանաւոր պետութիւններին եւ տեղեկութիւններ է խնդրել այն փոփոխութիւնների մասին, որոնք, լուրերին նայելով, պէտք է տեղի ունենան այդ կղզու պետական-քաղաքական դրութեան մէջ։ Մատնացոյց անելով այն խոստումները, որ պետութիւնները տուել են Թիւրքիային Կրէտէի վերաբերմամբ, Բ. Դուռը առաջուց բողոք է յայտնում Թիւրքիայի իրաւունքները սահմանափակելու շարունակութեան դէմ։ «Polit. Cor.»-ի ասելով՝ պետութիւնները հանգստացնող պատասխաններ տուին Բ. Դռանը։

—Պարիզի լրագիրներից մի քանիսը մեծ նշանակութիւն են տալիս ֆրանսիական զօրքերի գլխաւոր շտաբի կառավարիչ գեներալ Պանդէզէկի ճանապարհորդութեանը դէպի Պետերբուրգ, որ տեղի ունեցաւ մօտ օրերումս։ «Echo de Paris» մինչեւ անգամ հաւատացնում է, թէ Պանէզէկ Պետերբուրգից Պարիզ է տարել մի վաւերագիր, որ վերաբերում է զինուորական պայմանագրութեան Ռուսաստանի եւ Ֆրանսիայի մէջ։ Այդ նոյն լրագրի ասելով՝ Պետերբուրգում լուրջ վճիռներ են կայացել ֆրանսիական եւ ռուսական զօրքերի դերերի մասին ապագայ պատերազմներում եւ հէնց այս վճիռները մտցրած են յիշված վաւերաթղթի մէջ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 28-ին վախճանվեց Սինոպի եւ Սեվաստոպոլի հերոս գեներալ-ադիւտանտ Պերելեշին։ Փետրվարի 27-ին Պետերբուրգից ուղեւորվեց Մեծ-Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ՝ զինուորական ուսումնարաններին այցելութիւն գործելու համար։ Փետրվարի 28-ին, Թագաւոր Կայսրի եւ Մեծ-Իշխանների ներկայութեամբ, տեղի ունեցաւ Պետերբուրգի կամենդանտ գեներալ Ադլերբերգի թաղման արարողութիւնը։

ԽԵՐՍՈՆ։ Դեպքը մաքրվեց սառուցից. նաւագնացութիւնը սկսվեց։

ԲԼՈՒՄՖՕՆՏԷՆ։ Վերջին օրերում այստեղ հասան շատ բօէրներ, որոնք գերի են առնված հարաւում, նոյնպէս եւ շատ անասուններ, որոնք գրաւված են հարաւում։ Պլումէրի զօրքերը բերին 26 գերի։ Այստեղ նորից եկան 150 գերիներ։

ԼՕՆԴՕՆ։ 1901 եւ 1902 թուականների ծովային բիւջէտի համաձայն՝ պէտք է չինվեն հետեւեալ նաւերն եւս.—երեք զրահակիրներ, վեց զրահակիր շրջանաւեր, երրորդ կարգի երկու շրջանաւ, հինգ ականանաւեր, հինգ հակաականանաւեր, երկու եռակայմ փոքր նաւ, հինգ ստորջրեայ նաւեր հօլանդական սիստեմով եւ բացի սրանցից՝ տրանսատլանտեան զանազան ընկերութիւնների 28 նաւեր գործ կածվեն, որպէս սպառազինված շրջանաւեր։ Լրացուցիչ կրէդիտը նոր նաւերի շինութեան համար կառաջարկվի համայնքների ժողովին յետագայ ժողովներից մէկում։

ԼՕՆԴՕՆ։ Տաք վիճաբանութիւններ ծագեցրեց համայնքների ժողովում գեներալ Կոլվիլլին արձակելու հարցը։ Բալֆուր վճռական կերպով առարկում է Դուգլասի առաջարկութեան դէմ քննութիւն նշանակելու մասին, ասելով, որ այդ հանգամանքը կը դնէ համայնքների ժողովը վերաստուգող ինստանցիայի դրութեան մէջ՝ զօրքի մէջ տեղի ունեցող բոլոր փոփոխութիւնների վերաբերմամբ։ Լարսօն Ուոլտոնս ապացուցանում է, որ եթէ առաջարկութիւնը ընդունվի, զօրքի մէջ կարգապահութիւնը ոչնչացած կը լինի։ Զէմբերլէն յայտարարում է, թէ բանը Կոլվիլլին չէ վերաբերում, այլ Ռոբերտսին, եւ թէ ոչ Ռոբերտս, ոչ կառավարութիւնը չեն հնազանդվի այդ տեսակ որոշմանը։ Դուգլասի առաջարկութիւնը մերժված է։

ՊԵԿԻՆ։ Վալդերզէէ հաղորդեց Զաֆֆիին, թէ նա ինչ կարգադրութիւններ է արել ամարային ամիսների համար այն զօրքերի վերաբերմամբ, որոնք դրված են նրա կարգադրութեան տակ։ Անգլիացիներից հազար հոգի պէտք է գրաւեն ամարային պալատը, մի փոքրիկ զօրաբաժին—որսորդական պարտէզը, երկու հազար հոգի—Դանչժօուի եւ Բէյդանի շրջակաները։ Գերմանիան ուղարկում է իր զօրքերը, որոնք այժմ Պեկինում են, դէպի մի գիւղ, որ գտնվում է ամարային պալատից դէպի հիւսիսարեւմուտք, լեռներում, որովհետեւ Պաոտինֆուում գտնվող գերմանական զօրքերը զետեղվելու են լեռներում, դէպի արեւմուտք։ Եապոնացիները եւ աւստրիացիները կը մնան Պեկինում։ Վալդերզէէ ասում է, թէ զօրքերի այսպիսի տեղաւորմամբ անկարգութիւնների առաջը կառնվի։

1 մարտի

ՕՐԵՕԼ։ Բանտիչի սպանութեան մէջ մեղադրվող Լէսէվիցկի դատապարտված է բանտարկութեան 4 տարով եւ 6 ամսով։

ՄԻՒՆԽԷՆ։ Աւստրիական կայսրը ճանապարհ ընկաւ Միւնխէն։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնապէս։ Կապշտադտում փետրվարի 18-ից մինչեւ 24-ը տեղի են ունեցել ժանտախտից հիւանդանալու 50 նոր դէպքեր, որոնցից 8-ը վերջացել են մահով։

ԻՆԴԻԱՆՕՊՕԼԻՍ։ Միացեալ-Նահանգների նախկին նախագահ Հարրիսօն վախճանվեց։

ՋԻԿԱԳՕ։ Գէջ յայտնեց մի թղթակցի, որ իր արած նախկին յայտարարութիւնների մէջ նա յայտնել է, թէ չէ հետեւում այն կարծիքին, որ իբր թէ ռուսական շաքարը համաչափ մաքսի ենթարկելը կարող է մաքսային պատերազմի վտանգ առաջացնել։

ՕՏՏԱՎԱ։ Կանադայի պատգամաւորների ժողովը ձայների մեծամասնութեամբ մերժեց այն առաջարկութիւնը, որով առարկութիւններ են անվում զօրաբաժիններ հարաւային Աֆրիկա ուղարկելու շարունակութեան եւ ոստիկանական ծառայութեան համար կանադացիներից կամաւորներ ժողովելու դէմ։ Նոյն տեղում առաջին մինիստր Լօրիէ կարծիք յայտնեց առաջարկութեան դէմ, թէպէտեւ յայտնեց, որ համաձայն է այն բանի հետ, որ հարաւային Աֆրիկա զօրքեր ուղարկելը դադարեցնվի, որովհետեւ պատերազմը ընդհանրապէս վերջացած է. այսուամենայնիւ Լօրիէ հաւանութիւն էր տալիս այն մտադրութեանը, որով ենթադրվում է արգելել բրիտանական հպատակներին կամաւոր գրվել իրանց թագաւորի զօրքերի մէջ։ «Հարաւ-աֆրիկական հանրապետութիւնների վերականգնումը—աւելացրեց նա—անկարելի է։ Բօէրները իրաւունք չէին ունենայ գանգատվելու, եթէ Անգլիան եւս հետեւելու լինէր այն քաղաքականութեան, որին հետեւեցին բօէրները՝ դէպի Կապի գաղթականութիւնն եւ Նատալ խուժելուց յետոյ։ Թէեւ բօէրները կը զրկվեն անկախութիւնից, այսուամենայնիւ հարաւային ֆեդերատիվ Աֆրիկայում նրանք կը շարունակեն աղատութիւն վայելել անգլիական դրօշակի տակ»։

ԼՕՆԴՕՆ։ Կայացաւ մինիստրների խորհրդի արտակարգ նիստ, որ հրաւիրված էր շատ շտապով։ Լուրերին նայելով՝ դրա առիթներից մէկը Բոտայի եւ Կիտչենէրի մէջ տեղի ունեցող բանակցութիւնների վիճակն է։

ԲՐԻՒՍԷԼ։ Դեսպան Լէյդս լիազօրութիւն տուեց լրագիրներից մէկի թղթակցին յայտնել բացարձակապէս, թէ փոխ-նախագահ Շալկ-Բուրգէրին չէ ուղարկված ոչ մի հեռագրական որոշում Բոտայի հետ տեղի ունեցող բանակցութիւնների մասին, որոնց վերաբերմամբ Կրիւգէրին եւս ոչինչ յայտնի չէ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրորդ ներքին փոխառութեան գլխաւոր 70-րորդ վիճակահանութեան ժամանակ, գումարները տարան հետեւեալ տոմսերը.—200,000—930/27, 75,000,—2371/13, 40,000—19,600/17, 25,000—1374/50, 10,000—14,465/44, 1,920/22, 116516/29 (?), 8000—16,228/33, 11,387/6, 1540/16, 6,205/42, 4,626/1, 5000—14,097/18, 2,026/8, 16,823/46, 6,211/16, 12,734/25, 16,276/50, 1,184/39, 4,841/42, 1000—7,067/31, 15,433/6, 6,727/39, 10,398/44, 12,055/36, 1,586/4, 19,559/10, 11,040/1, 9,234/40, 10,561/37, 17,092/35, 6,852/28, 4,715/30, 8,224/31, 5,722/22, 8,407/20, 15,859,/15, 12,539/13, 14,044/36, 10,384/36.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

որոնում է աշխատանք. կարող է լինել բոննա հայ ընտանիքի մէջ կամ ծառայել խանութներում որպէս հաշուապահ համաձայն եւ քաղաքից դուրս գնալ։ Հասցէն՝ Ռէուտովկայա փողոց, № 41։ Հարցնել Խաչատուր Մխիթարեանցին։ 3—3

ՍՊԻՏԱԿ ԲԱՆԴԵՐՕԼՕՎ
ՅԵԼԻԻԼԵԱՐՆԻՑ
ԲԱՂԴԱԴԻ ՍԵՐՄ

կը վաճառվի նպաստաւոր պայմաններով։ Անանօվի քարվանսարա, № 48 դրասենեակը։ 9—10

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Ուրբաթ, մարտի 2-ին
Բագուի հայ դրամատիկ դերասանական խումբը, մասնակցութեամբ յայտնի դերասանուհի տ. Սիրանոյշի, կը ներկայացնէ
Ի ՆՊԱՍՏ Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԻԶԷԻԼ
ողբերգութիւնը Բուդդայի կեանքից, 4 գործողութեամբ, հեղինակ. Սիլվէստրի եւ Մօրանի, թարգմ. Ա. Վրոյրի
Իզէիլի դերը կը կատարէ տ. ՍԻՐԱՆՈՅՇ
Սիդարդայի (Բուդդա) դերը կը կատարէ պ. ՊԵՏՐՈՍԵԱՆ
Տեղերի գները բէնէֆիսային են։ Տոմսակները ծախվում են թատրօնի կասսայում։ Սկիզբը 8 ժամին է։ (չ. ո.) 2—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐ
«Լ. ԻՔՕՆՕՄԻՏԻՍ» ԵՒ «ԲԵՐԹԻ ԵՒ ԸՆԿ.»
ֆիրմաների
սպիտակ բանդրոլով, ծախվում են ֆրանսիական ընկերութեան գրասենեակում, նախկին Արծրունի գալէրէայում № 127.
(հ. չ.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ
Աւագների խորհուրդը, կանոնադրութեան 42-դ յօդուածի համաձայն, խնդրում է պ.պ. անդամներին չնորհ բերել ընդհանուր ժողովի կիրակի, մարտի 4-ին, երեկոյեան 9 ժամին, թեկնածուներին քուէարկելու եւ տնտեսական անյետաձգելի հարցերը քննելու համար։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1901 թուի մարտի 3-ին, ցերեկվայ ժամի 1-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու բետոնից ջրմուղ խողովակ շինելու աշխատանքները՝ Վօզնեսենսկայա փողոցից Կօսոյ փողոցով մինչեւ Արուցեվի տունը, 50 պօդ. սաժ. երկարութեամբ, 1110 ր. գումարի։ Աճուրդին մասնակցողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 2—3

ՀՐԱՒԷՐ
Մարտի 4-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, ս. Կարապետի եկեղեցում ժողով է լինելու, նոր երէցփոխ ընտրելու, ուստի սրանով մեծապատիւ պ.պ. ծխականներն երրորդ անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մասնակցելու համար։
Գործակալ բ. մասին Թիֆլիսի՝
1—2 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
1901 ԹՒԻ
Բաժանորդագրութիւնը
„ՄՈՒՐՃ"
գրական, հասարակական եւ քաղաքական ամսագրի
—
Խմբագրութեան անդամներն են՝
պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանում տարեկան	10 ր.	
» կէս տարին	6 »	
» 1 ամսվան	1 »	
Արտասահման՝ տարեկան	30	ֆրանկ.
» կէս տարին	18	»
» 1 ամսվան	3	»

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել Թիֆլիսում—խմբագրատանը (Երեւանեան հրապարակ, տ. Խարազեանի)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է գրվել Тифлисъ, въ редакцію журн. «Мурчъ»։
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtch».
Ծանօթութիւն. 1900 թուի այն բաժանորդները, որոնք չեն ստանայ այդ թուի բաժանորդագրի մնացորդը (5 ր.), բայց եւ չեն ուղարկի 1901 թ. երկրորդ կիսամեակի 5 ռուբլին, կը ստանան «Մուրճ» միայն մինչեւ յունիս ամիսը։—Ով դժուարանում է տարեկան բաժանորդագրին (10 ր.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ր., մարտի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.)։
Հրատարակիչ եւ ժամ. խմբագիր՝
Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բագում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուիրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։
70—100

Լոյս տեսան
1. Ո՞Վ Է ԵԱՆՑԱՒՈՐԸ . . . . . 15 կ.
2. ԵՒՈՂՋ ՀՈԳԻՆ ԵՒՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ. . . 10 կ.
Ճանապարհածախս իւրաքանչիւրին 3 կոպէկ։ Արդիւնքը յատկացվում է Ախալցխայում հիմնվելիք աշխատանոցի օգտին։ Դիմել՝ Петербургъ, Владимірскій, 3 кв. 8. Д-ру А. С. Кечегьяну. 3—6

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 6—10

М. 109486

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Марта 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27